ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
(Գիտական հոդվածների պարբերական ժողովածու)

№ 13

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2017

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ ВОСТОКОВЕДЕНИЯ

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ

(Периодический сборник научных статей)

№ 13

Ереван
Издательство ЕГУ
2017

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF ORIENTAL STUDIES

JOURNAL OF ORIENTAL STUDIES
(scholarly periodical journal)

№ 13

YEREVAN
YSU PRESS
2017

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
արևելագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագրական խորհուրդ՝

Մելիքյան Գուրգեն բ. գ. թ., պրոֆեսոր *(նախագահ),* Մելքոնյան Ռուբեն բ.գ.թ., դոցենտ , Կարապետյան Ռուբեն պ.գ.դ., Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ, Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր, Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ, Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ, Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր, Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր, Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ, Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան), Տեր-Մաթևոսյան Վահրամ պ.գ.թ., Ռեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան), Էքմեքչյան Լեռնա PhD (ԱՄՆ), Գրեկյան Երվանդ պ.գ.դ., Իլյա Յակուբովիչ բ.գ.դ, պրոֆեսոր (Գերմանիա), Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ, պրոֆեսոր (Ուզբեկստան)

© ԵՊՀ հրատ., 2017

Տաթևիկ Հակոբյան[1]

ԱԲԴՈՒԼ ՀԱՄԻԴ ԵՐԿՐՈՐԴԻ ԵՎ ՄԻԴՀԱՏ ՓԱՇԱՅԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ. ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Բանալի բառեր՝ *Աբդուլ Համիդ 2-րդ, Միդհատ փաշա, օսմանյան սահմանադրություն, հակամարտություն, հակասություններ*

19-րդ դարի վերջին քառորդում Օսմանյան կայսրությունը գտնվում էր անկման եզրին. մի կողմից արտաքին պետական պարտքի ահռելի չափեր, մյուս կողմից գնալով ակտիվացող ազգային-ազատագրական շարժումներ և «հիվանդ մարդու» մասնատումը հնարավորինս արագացնելու համար այս ամենին սատարելու պատրաստ օտարերկրյա պետություններ: Թուրքական իշխանական վերնախավը փորձում էր կայսրությունն այս իրավիճակից փրկելու ելք գտնել, սակայն անձնական նկրտումներն ու գաղափարական տարբերությունները թույլ չէին տալիս միավորվել: Հանրապետության հռչակումից հետո թուրքերը բազմիցս վերախմբագրել են սեփական պատմությունը՝ այս կամ այն խնդրին տալով տվյալ պահի համար հարմար մեկնաբանություն: Նույն իրադարձությունը մի շարք գործոնների ազդեցության տակ մի հեղինակի կողմից ստանում է խիստ դրական, իսկ մյուսի կողմից ծայրահեղ բացասական արձագանք: Հակասական են նաև ժամանակի քաղաքական գործիչներին և

[1] ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի ասիստենտ, էլ. փոստ՝ tatevhakobyan@ysu.am

հատկապես սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի (1876-1909 թթ.) գործունեությանն ու քաղաքականությանը տրված գնահատականները: Օսմանյան սուլթանների շարքում թե՛ Թուրքիայում, թե՛ դրա տարածքից դուրս թերևս ամենաշատը նա է դարձել քննարկման ու քննադատման առարկա: Որոշ աղբյուրներ Համիդին ծայրահեղ պահպանողական, կրոնամոլ են համարում, մինչդեռ այլ աղբյուրներում նշվում է, որ սուլթանի առօրյա կյանքը բավական եվրոպականացված է եղել: Ավելին, չնայած մի շարք հեղինակներ Աբդուլ Համիդին մոլեռանդ հավատացյալ են համարում, նրա մերձավոր շրջապատում հանդիպում էին նաև ոչ մուսուլմաններ. օրինակ՝ բանկիրը՝ Զարիֆին, և բժիշկը՝ Մավրոենին, հույներ էին[2]:

Այս հոդվածում փորձելու ենք անդրադառնալ թուրք պատմագրության մեջ բազմիցս քննարկված մի ներքին քաղաքական խնդրի՝ Աբդուլ Համիդ 2-րդի և Ահմեդ Միդհատ փաշայի հարաբերությունների վերլուծությանը: Հայտնի է, որ Միդհատ փաշան դեռևս սուլթան Աբդուլ Ազիզի (1830-1876 թթ.) կառավարման տարիներից անցել է սահմանադրական բարեփոխումների կողմնակիցների շարքերը և սկսել ակտիվ գործունեություն ծավալել: Միդհատ փաշան քայլ առ քայլ նախապատրաստում էր պետական հեղաշրջում: 1876 թ. մայիսի 29-ի լույս 30-ի գիշերը Միդհատ փաշան կառավարության մի շարք անդամների հետ պետական հեղաշրջում իրականցրեց, որի արդյունքում սուլթան Աբդուլ Ազիզը գահընկեց արվեց և գահ բարձրացավ թուրք սահմանադրականների դրածո ու մասոնական կազմակերպության անդամ Մուրադ V-ը[3]: Այդ տարիներին

[2] Karpat K. H., The The Politicization Of Islam:Reconstructing Identity, State, Faith, And Community In The Late Ottoman State, New York, 2001, p. 155.

[3] Սիմոնյան Հր., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991, էջ 41:

Միդհատ փաշայի հետ Օսմանյան կայսրության սահմանադրության հաստատման ուղղությամբ աշխատողների մեջ մեծ թիվ էին կազմում նաև հայերը[4]: Հարկ ենք համարում նշել, որ օրինակ՝ Գրիգոր Օտյանը եղել է Փարիզում և Լոնդոնում Միդհատ փաշայի անունից հրատարակվող հոդվածների հեղինակը: Կան վկայություններ նաև այն մասին, որ Օտյանը վճռական դեր է խաղացել սահմանադրության վերջնական տեքստի նախապատրաստման աշխատանքներում[5]:

Սակայն շատ կարճ ժամանակ անց նախ պարզվեց, որ նոր սուլթանն ամենևին չի ցանկանում անվերապահ ենթարկվել իրեն գահ բարձրացնողներին, և բացի այդ, Մուրադի մոտ հայտաբերվել էր հոգեկան շեղումներ, ուստի որոշվեց իշխանափոխություն անել, և ընտրությունը կանգ առավ Մուրադի կրտսեր եղբոր՝ Աբդուլ Համիդի վրա, որը պատմության մեջ մտավ Աբդուլ Համիդ 2-րդ անվամբ: Միդհատն ու Ռեշիդը սկսեցին հակամուրադական քարոզ՝ ամենայն հավանականությամբ Աբդուլ Համիդի համաձայնությամբ: Մուրադի և Աբդուլ Համիդի միջև սկսվեց պատերազմ, որը նման էր Աբդուլ Ազիզ-Մուրադ մրցակցությանը[6]: Իհարկե մինչև այսօր էլ հստակ պատասխան չկա, թե արդյոք Մուրադը իսկապես հիվանդ էր, թե դա զուտ պատրվակ էր իշխանափոխության համար:

Աբդուլ Համիդի և Միդհատ փաշայի հարաբերությունները սկսվել են դեռ Մուրադի իշխանության օրոք. նախքան գահ բարձրանալը 1876 թ. ամռանը Աբդուլ Համիդը մի շարք գաղտնի բանակցություններ է վարել Միդհատ փաշայի հետ: Թեև թույլ կողմ

[4] Ismail Kemal Bey, The memoirs of Ismail Kemal Bey, London, 1920, p. 254.

[5] Սաֆրաստյան Ռ., Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.), Երևան, 2009, էջ 98- 99:

[6] Koloğlu O., Abdülhamid Gerçeği, İstanbul, 2. Baskı, 1987, s. 128.

լինելով Համիդը համաձայնվել է հրապարակել սահմանադրությունը, սակայն ըստ համիդամետ պատմաբաններ Զ. Դանըշմանի, Ն. Ֆ. Քըսաքյուրեքի, դրանով նա ցույց է տվել իր դիվանագիտական կարողություններն ու քաղաքական հմտությունները Միդհատ փաշայի նման փառասեր գործչի հետ պայքարում: Արդյունքում Միդհատ փաշայի անմիջական մասնակցությամբ 1876 թ. օգոստոսի 31-ին սուլթան է հռչակվում Աբդուլ Համիդը:

Չնայած Աբդուլ Համիդը առանձնապես չէր ցանկանում հռչակել սահմանադրությունը, բայց հանուն գահի զիջումների է գնում: Հոկտեմբերին սահմանադրության նախագիծը քննարկելու նպատակով սուլթանի հրամանով Միդհատ փաշայի գլխավորությամբ ստեղծվում է սահմանադրական հանձնաժողով: Ըստ խոսակցությունների՝ սուլթան Աբդուլ Համիդին տարբեր մարդկանց կազմած մոտ 20 նախագիծ է ներկայացվել և Միդհատի կազմածն էլ եղել է դրանցից մեկը[7]: Նախագծի քննարկումը ևս դարձել է սուլթանի և Միդհատի ընդհարման պատճառ. սահմանադրության որոշակի հոդվածների շուրջ նրանք ունեին հակադիր կարծիքներ: Միդհատ փաշան հույս ուներ, որ սահմանադրության ընդունումը հնարավորություն կտար որոշ չափով սահմանափակել սուլթանի իշխանությունը, սակայն Աբդուլ Համիդն անկեղծորեն հավատում էր, որ ինքը միայն Աստծո առաջ է պատասխանատու և ոչ մի սահմանադրություն չի կարող կառավարել իրեն:

Թեև ընդունված սահմանադրությունը Միդհատ փաշայի գրած տեքստից բավական տարբեր էր, միևնույնն է սահմանադրությունը նրա անվան հետ էր ասոցացվում: Ջ. Միսմերն իր հուշերում գրում է, որ այդ գաղափարը Միդհատը

[7] Danışman Z., Osmanlı İmparatorluğu Tarihi, Cilt XIII, Sultan İknici Abdülhamid Han, İstanbul, 1966, s. 43.

տասը տարի առաջ էլ է ունեցել, սակայն հետագայում՝ արդեն Միդհատի աքսորից հետո, Աբդուլ Համիդը տեղական և արտասահմանյան մամուլում, պետական փաստաթղթերում ամեն կերպ փորձում էր ցույց տալ, որ սահմանադրությունն իր ստեղծագործությունն է: Տարօրինակ է, որ Միդհատն աքսորում գտնվելիս «Journal des Debats»-ին հղած նամակում Համիդին անվանում է «ժողովրդիս ազատության տված սուլթան»[8]:

Սուլթան-Միդհատ փաշա հարաբերությունների հաջորդ լարվածության պատճառը դարձավ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը. Միդհատ փաշան, ըստ տարբեր աղբյուրների, ի համեմատ Աբդուլ Համիդի հակված էր սկսել պատերազմ և տարբեր քաղաքական ու հասարակական քայլերով փորձում էր դրանում համոզել նաև սուլթանին: Օրինակ՝ նրա կազմակերպմամբ կրոնական հաստատությունների ուսանողները «Պատերազմ ենք ուզում» կոչերով ցույց արեցին պալատի առաջ, իսկ Մահմուդ Ջելալեդդին փաշան Համիդին հայտնեց, որ պատերազմ պահանջող ժողովուրդը անհրաժեշտության դեպքում պատրաստ է սուլթանին զահընկեց անել և Մուրադին ետ բերել[9]: Ի վերջո, սուլթան Աբդուլ Համիդը տեղի տվեց և «93-ի պատերազմը»:

Աբդուլ Համիդի և մեծ վեզիր նշանակված Միդհատի միջև ժամանակ առ ժամանակ սուր վեճերի վերածվող տարակարծությունները գնալով խորանում էին: Բացի այդ, ըստ մեծ թվով հետազոտողների, Աբդուլ Համիդը Միդհատ փաշայի հանդեպ ի սկզբանե ուներ անվստահություն, քանի որ հենց նրան էր համարում էր իր հորեղբայր Աբդուլ Ազիզի սպանության կազմակերպիչներից: Սահմանադրության հեղինակ Միդհատ

[8] Koloğlu O., նշվ. աշխ., էջ 233-234.
[9] Danışman Z., նշվ. աշխ., էջ 49.

փաշան հասել էր այնպիսի ինքնավստահության, որ կարծում էր, թե միայն ինքը կարող է փրկել երկիրը և սկսել էր բացահայտ արհամարհել սուլթանին: Մեծ վեզիրը նաև իր կտրուկ անհամաձայնությունն էր հայտնել մայրաքաղաքային մի շարք թերթերի նկատմամբ հալածանքների կազմակերպման հարցում: Այս բոլոր հանգամանքները ուղղակի կանխորոշում էին Աբդուլ Համիդի և Միդհատ փաշայի վերջնական առճակատումը, որից հետո քաղաքական ասպարեզում մնալու էր նրանցից միայն մեկը: Իր հուշերում Աբդուլ Համիդը գրում է. «Միդհատ փաշան մտավ խառնակիչների ցանկ, քանի որ գահընկեց անելու գործին էր մասնակցել: Ոչ մի ղեկավար չի կարող վստահել գահընկեց անողին, նույնիսկ եթե գահընկեց արվածն իր թշանմին է»[10]: Սուլթանը իրեն գահ բարձրացրած Միդհատ փաշային համարելով իր ամենավտանգավոր քաղաքական հակառակորդը՝ սկսեց միջոցներ որոնել վերջինիս հետ հաշվեհարդար տեսնելու հարցում: Եվ Աբդուլ Համիդը օգտվելով սահմանադրության 113-րդ հոդվածից՝ որոշում կայացրեց աքսորել Միդհատ փաշային հետևյալ հիմնավորմամբ. «Երկրում նրա կողմից մի այնպիսի իրադրության ստեղծում, որը մեծ վտանգ է ներկայացնում պետության համար»: 1877 թ. փետրվարի 5-ին Միդհատ փաշային կանչեցին պալատ և հայտնեցին, որ պետք է անմիջապես հեռանա Եվրոպա: Հետաքրքիր է, որ Միդհատի աքսորին լուրջ ընդդիմացողներ չեղան: Աբդուլ Համիդն իր հուշերում գրում է. «Միդհատ փաշան վեզիրության ժամանակ այնքան վստահ էր, որ ժողովուրդը իրեն սիրում է, որ նույնիսկ չէր թաքցնում՝ եթե իրեն հանեմ, մեծ խռովություն կսկսվի, ինձ գահընկեց կանեն և գուցե մահապաժի կենթարկեն: Մինչդեռ երբ ես նրան Եվրոպա ուղարկեցի, ոչ ոք բերանը չբացեց, ավելին, շատ վեզիրներ ու

[10] Koloğlu O., նշվ. աշխ., էջ 260:

քաղաքական գործիչներ ինձ շնորհավորեցին, գրողները ինձ քասիդներ, նրա հասցեին ծաղրանքներ գրելով թերթերում, գրքերում ուրախություն տարածեցին»:[11] Եվ իրոք, ավելորդ ինքնավստահությամբ տառապող Միդհատը Դարդանելի նեղուցով անցնելիս հարցրել է, արդյոք ժողովուրդը դեռ ապստամբություն չի բարձրացրել[12]:

Միդհատ փաշան աքսորականի վիճակում գտնվեց ավելի քան մեկ ու կես տարի և 1878 թ. աշնանը նրան առաջարկվեց վերադառնալ Ստամբուլ: Բանն այն է, որ այս ընթացքում մայրաքաղաքում տեղի էր ունեցել պալատական հեղաշրջման երկու փորձ, իսկ սուլթանը դրանում կասկածում էր Միդհատին և, վերջինիս բերելով կայսրություն, նպատակ ուներ նրան պահել ուշադրության կենտրոնում և վերահսկել: Աբդուլ Համիդը Միդհատին նշանակել է նախ Սիրիայի, ապա 1880 թ. Այդընի նահանգապետ[13]: 1881 թ. մայիսին Միդհատ փաշան կրկին ձերբակալվել է և նրան ներկայացվել է մեղադրանք սուլթան Աբդուլ Ազիզի սպանության կազմակերպմանը մասնակցություն ունենալու մեջ: Միդհատը դատապարտվել է մահվան, սակայն հետո վճիռը փոխվել և նրան ցմահ բանտարկել են Արաբական թերակղզու Թաիֆի ամրոցում, իսկ 1884 թ. մայիսի 7-ին ամենայն հավանականությամբ սուլթանի հրամանով նրան բանտում խեղդամահ են արել:

Այսպիսով, Աբդուլ Համիդ 2-րդի և Ահմեդ Միդհատ փաշայի հակամարտությունն ավարտվեց սուլթանի հաղթանակով, որն էական դեր խաղաց սուլթանի անսահմանափակ իշխանության

[11] Նույն տեղում, էջ 244:

[12] Danışman Z., նշվ. աշխ., էջ 52:

[13] Բայբուրդյան Վ., Օսմանյան կայսրության պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 2011, էջ 541:

հաստատման համար: Սակայն, այնուամենայնիվ, թուրքական պատմագրության մեջ այս հակամարտության և դրա հանգուցալուծման վերաբերյալ բանավեճերը և հակադիր կարծիքները շարունակվում են մինչ օրս:

THE REFLECTION OF CONFLICT BETWEEN SULTAN ABDULHAMID II AND MIDHAT PASHA IN TURKISH HISTORIOGRAPHY: BRIEF ESSAY

(summary)

Hakobyan Tatevik

This paper is an attempt to analyze the relations of Abdulhamid II and Ahmed Midhat pasha.one of the most discussed internal problems of Turkish historiography. The triumph of Abdul Hamid in this conflict played important role in the establishment of sultan's absolute power. However, the discussions and contradictory viewpoints on the conflict and its denouement are still present in Turkish historiography.

ОТРАЖЕНИЕ КОНФЛИКТА СУЛТАНА АБДУЛ ГАМИДА II И МИДХАТ ПАШИ В ТУРЕЦКОЙ ИСТОРИОГРАФИИ: КРАТКИЙ ОЧЕРК

(резюме)

Акобян Татевик

Данная статья - попытка представить анализ отношений Абдул Гамида II и Мидхат паши. Их противостояние завершилось победой Абдул Гамида, что во многом поспособствовало установлению безграничной власти султана. Несмотря на это, в турецкой историографии до сих пор продолжаются дискуссии и противоречивые оценки